ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր 10/07/2020

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գալստյանը, Գառնիկ Կարապետյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արթուր Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղալյանը

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի ԹԻՎ 07 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 10-ի թիվ 07 հերթական նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի 2020 թվականի երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:

2. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3. Ծաղկաձոր համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով, որպես ընդլայնում օտարելու մասին:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34/

Լսեցին
ՇԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ընդունել ի գիտություն Ծաղկաձոր համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման ընթացքի երկրորդ եռամսյակի վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՄԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 60-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 17-ի N 1/փ-53 եզրակացությունը՝

1.Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունը՝ Ծաղկաձոր համայնք, Օրբելի եղբայրներ փողոցի թիվ 21 հասցեում գտնվող «Ինտրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող 0,18 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողերից փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողերի:

2.Նշված փոփոխությունը կատարել նաև համայնքի կադաստրային քարտեզում՝ 07-005-0026-0086 կադաստրային ծածկագրով պատկերված հողամասի 0,18 հա մակերեսով հատվածի նպատակային և գործառնական նշանակությունը հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողերից փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողերի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36/

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին >> թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած Ծաղկաձոր համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերով՝

1. Վահագն Ավետիքի Նազարյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող քաղաք Ծաղկաձոր, Սարալանջ փողոց թիվ 12/1 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18102019-07-0035, կադաստրային ծածկագիր՝ 07-005-0002-0003) 1.1 հա մակերեսով հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված հողամասին և հողամասի վրա ամրակայված 492.16 քմ ընդհանուր մակերեսով շինություններին կից՝ քաղաք Ծաղկաձոր, Սարալանջ փողոց թիվ 12/2 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29062020-07-0147, կադաստրային ծածկագիր՝ 07-005-0002-0038), 0,35 հա ընդհանուր մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 15 834 000 (տասնհինգ միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Դավիթ Բաղդասարյան